

ջին տարիները տուած է ազգին տասնեակներով վարժապետ ու ֆահանայացու: Միաբան եւ պաշտօնէութիւն՝ 60, աշակերտ՝ 100, ամբողջովին բնաջինջ՝ վանահայր Տ. Համագասպի մման»⁶²:

1915ի եղեռնը վերջին մահաշունչ վարադուրը ձգեց Կարինի դաշտին թերեւս ամէնէն սիրուած վանական հաստատութեան՝ Հնձուց կամ Կարմիր Վանքի կեանքին վրայ: Այդ տխուր թուականէն ասդին, գործնականօրէն կ'աւարտին նոյն մենաստանի մասին մեր ունեցած ծանօթութիւնները: Թէոդիկի «Միաբան եւ պաշտօնէութիւն... ամբողջովին բնաջինջ» տխուր եւ ամէն ինչ բացատրող արտայայտութեան դիմաց, ինքնաբերաբար կանգ կ'առնէ նաեւ մեր գրիչը, յիշելով պահ մը՝ Բաղրատունեաց Թագաւորութեան այն գեղեցիկ ու ցընծուն օրերէն մէկը, երբ Սարգիս Վարդապետ, Ժ. դարուն, խանդավառօրէն հիմնեց այս մենաստանը, հողեկան ու մշակութային նպատակներով գործելով՝ ի'ր Հայրենիքի հողին վրայ եւ ի'ր պաշտելի ժողովուրդի կողքին:

Հ. ՏԱՃԱՏ ԵԱՐՏԸՄԵԱՆ

62. Թէոդիկ, Գոգոթա քրքահայ հոգեւորականութեամբ, Երուսաղէմ (տարեթիւր կը պահուի), էջ 184: Թէոդիկի այս վկայութենէն կ'իմանանք, թէ Կարմիր Վանքի վերջին վանահայրն է եղած՝ Տ. Համագասպ ԳՀՆյ. Դինարեան, որուն կեանքի մասին Թէոդիկ վանդադառնայ նոյն էջին մէջ:

ՆՈՐԱՅԱՅՏ ՎԱԽԵՐԱԳՐԵՐ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԿՈԼՈՏ ՊԱՏՐԻԱՐԷԻ ՄԱՍԻՆ

Եթէ երջանկայիշատակ Մխիթար Աբբայ, ԺԸ. դարու առաջին կիսուն, Արեւմուտքի մէջ Հայ մշակոյթի ջահը աննախընթաց կերպով պայծառացուցած է, բազմերախտ Յովհաննէս Կոլոտ Պատրիարք ալ՝ յիշեալ շրջանին՝ նոյնը կատարած է Թուրքիոյ, եւ յատկապէս անոր բարգաւաճ մայրաքաղաքին՝ Հայ մշակոյթի երբեմնի գլխաւոր կեդրոնին մէջ: Այս պատճառով ան իրաւամբ նկատուած է Պոլսահայ ԺԸ. դարու իմացական եւ հողեւոր վերադարձումին մեծ ռահվիրան:

Այս առիթով կ'արժէ նշել՝ թէ Կոլոտ անկեղծ հիացող մը եղած է Մխիթար Աբբահօր, եւ մասնաւորապէս բարձրօրէն գնահատած է անոր Մատթէոսի Աւետարանին ընդարձակ մեկնութիւնը՝, որ լոյս տեսած է Վենետիկ, 1737ին (1012 էջ): Ասկէ զատ Մխիթար Աբբայ եւ Կոլոտ անուանական առընչութիւն մըն ալ ունեցած են իրարու հետ, որովհետեւ վերջնոյս հօրը անունը եղած է Մխիթար:

Հետեւաբար «Բազմավէպ»ի ներկայ բացառիկին՝ բազմավաստակ Պատրիարքին նուիրուած գրութեամբ մը փափաքեցանք մասնակցել, օգտուելով վերջին տարիներու ընթացքին իր մասին մեր կողմէ ձեռք բերուած նորայայտ եւ կարեւոր վաւերագրերէն, որոնք նոր լոյս կը սփռեն իր կեանքին կարգ մը անցքերուն վրայ:

Մեր սոյն աշխատութիւնը յարմար դասեցինք ներկայացնել ըստ տորաբաժանումներով, ըստ իւրաքանչիւր վաւերագրի կամ նիւթի:

Ա. ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

«Կոլոտ» մականունը, ընդհանրապէս մեր ժամանակակից բանասէրներուն կողմէ նկատուած է մակդիր մը կամ յորջորջում մը, են-

1. Հ. Միք. Վրդ. ԶԱՄԶԱՆ, Պատմութիւն Հայոց, հտ. Գ, Վենետիկ 1786, էջ 775: Նաեւ ԲԱՐԳԷՆ Մ. ՎՐԴ. ԿԻԻԼԵՍԻՐԵԱՆ, Կոլոտ Յովհաննէս Պատրիարք, Վիեննա 1904, էջ 49:

Թակային իբր թէ կարճահասակ կամ «պլուզ» ըլլալուն պատճառով: Ըստ Կիւլէսէրեանի՝ Կոլոտ բառը Բաղէշի գաւառաբարբառին մէջ այդ իմաստը ունի²: Նկատի առնելով որ իր ժամանակակիցները այսպիսի ակնարկութիւն մը չեն կատարած, այս կարծիքը պարզ ենթադրուած թիւն մը կը թուի ըլլալ: Յետոյ Կոլոտի նման նշանաւոր պատրիարք մը «կարմուկ» մակդիրով մկրտել նսեմացուցիչ եւ անպատշաճ պիտի ըլլար: Կիւլէսէրեան նոյն էջին վրայ կ'աւելցնէ նաեւ թէ՛ այս մակդիրը աւելի հաւանական է որ մականունն մը ըլլայ, որովհետեւ Ժ. Ղարուն Գոլոտենց կամ Կոլոտիկ մականունը կրող Յովհաննէս անունով գիտնական վարդապետ մըն ալ կայ, որ Յսայեայ մարգարէի եւ Դիոնեսիոսի դործերուն մասին երկու մեկնութիւն թողած եւ Հերմոնի վանքին վարժապետ եղած է: Ըստ Ղալաթիոյ Ազգային մատենադարանի թիւ 154 ձեռագիր Հաւաքածոյին, յիշեալ Գրիգոր Տաթեւացիի (1346-1409) աշակերտներէն է³: Նաեւ մասնակցած է 1441 տարւոյն Վաղարշապատի ժողովին եւ վախճանած՝ 1443ին:

1949 տարւոյն ամբան, երբ էտիրնէզարուի Հայոց գերեզմանատան հին եւ կարեւոր արձանադրութիւնները կը հաւաքէինք, հանդիպեցանք Ժ. Ղարէն Կոլոտովի մականունը կրող Զմառացի երկու անձերու տապանաքարերուն: Ասոնցմէ առաջինը կը պատկանի Կոլոտովի Յովհաննէսի կողակից Մարիամին, որ մեռած է 1718ին, քիչ երկրորդը՝ իրենց դստեր՝ Մանուշի, որ մեռած է 25 Ապրիլ 1795ին: 1955ին այս մասին յօդուած մըն ալ հրատարակած ենք «Կոլոտ Յովհաննէս Պատրիարք ծննդեամբ Բաղիշեցի» էր քէ Զմառացի» խորագրով⁴:

Հետեւաբար «Կոլոտովի» մականունն գոյութիւնը կը փաստէ՝ թէ «Կոլոտ»ը կրճատուած տոհմանուն մըն է: Միւս կողմէ, վերոյիշեալ երկու տապանաքարերը նոր լոյս կը սփռեն Կոլոտ Պատրիարքի ծննդավայրին մասին: Որովհետեւ «Բաղիշեցի» յորջորջումը, հոն ծնած ըլլալուն մասին կարելի չէ ասպացոյց մը նկատել, քանի որ Ամրդոլու վանքին միաբան ըլլալուն պատճառով՝ Բաղիշեցի կոչուած է, ի շարս այլ միաբաններու:

Հոս կ'արժէ նաեւ նշել թէ՛ Ակնայ մէջ ալ «Կոլոտենց»ի մօտ եղող «Կոլոտենց» կամ «Բոլոտենց» ձեւով մականունն մը գոյութիւն ունեցած է, որուն մասին գրած ենք Թորոս Աղատեանի (1893-1955) յետ մահու լոյս տեսած Ակնայ յիշատակարանին մէջ (էջ 72 եւ 92): Այս դերգաստանին մեղի ծանօթ հնագոյն դէմքն է Գրիգոր Ամիրա, որ կը կրէ նաեւ «Համբմովոլու» մականունը: Իր Յովհաննէս անունն որդին

2. Կիւլէսէրեան, նշ. աշխ. էջ 73-74:

3. Կիւլէսէրեան, Յուդայ ձեռագրաց Ղալաթիոյ Ազգային Մատենադարանի Հայոց, Անթիլիաս 1961, սիւնակ 977:

4. «Հայաստանի Կոչմակ», Նիւ Եորք 1955, թիւ 47, էջ 1117-1118:

մեռած է 1758ին, իսկ Մարիամ անուն դուստրը՝ 12 Յունիս 1780ին: Կարելի է ենթադրել՝ թէ «Կոլոտենց»ը աղաւաղուելով վերածուած է «Կոլոտենց»ի, կամ «Բոլոտենց»ի, եւ յառաջիկային ալ «Գոլոտենց»ի կամ «Բոլոտենց»ի: Այս գերդաստանին կը պատկանի ծանօթ մտաւորական Բժիշկ Դոկտ. Պօղոս Բոլոտեան (1870-1949): Մեր այս ենթադրութեան մէջ նկատի ունինք մասնաւոր Զմառացի Ակնայ մօտ գրտնուելը:

Կոլոտ Պատրիարքի՝ Յակոբ Պատրիարք Նալեանի (1701-1764) հանդէպ սնուցած մեծ սիրոյն եւ համակրանքին մէջ, թերեւս որոշ ազդեցութիւն ունեցած է նաեւ իրենց հաւանական քաղաքակից ըլլալին:

Այժմ կը ներկայացնենք թրքադրոշմ Կօլօտ օղլի մականունը կրող վերոյիշեալ երկու անձերուն տապանաքարերուն արձանադրութիւնները, երկրորդին պարունակած ուղղադրական տառասխալները անսխալօրէ պահելով:

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ
ԶԻՄԱՌԱՅԻ ԿՕԼՕՏ ՕՂԼԻ
ՅՈՎԱՆԵՍԻ ԿՈԼԱԿԻՑ ՄԱՐԻԱՄ
ԹՎԻՆ ՌՄԼ (1781):

*
* *

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ ԶԻ-
ՄԱՐԱՅԻ ԿՕԼՕՏ ՕՂԼՈՒ ՕՅԱՆ-
ՆԵՍԻ ԴՈՒՍՏՐ ՄԱՆՈՒՇ ՈՐ ՓՈԽԵ-
ՅԱԻ (ԱՌ) ԱՍՏՈՒԱԾ ԹՎԻՆ ՅԱՆՈՑ
ՌՄԵԴ (1795) ԱՊՐԻԼ ԻՆ:

Բ. — ՀՕՐ ԱՆՈՒՆԸ

Կոլոտ Պատրիարքի հօրը անունը մինչեւ օրս անյայտ կը մնար⁵: Թրքահայոց Պատրիարքարանի դիւանատան նոր թիւ 2333 հայատառ թրքերէն Երուսաղէմի վազֆի տոմարը բարեբախտաբար այս մասին լոյս սփռեց: Հոն հանդիպեցանք Կոլոտ Պատրիարքի անունը կրող երեք վաւերագրերու: Դասաւորման կարգով 14 թուահամարը կրող առաջինը՝ Պրուսայի Խօճա Միւհամմէտ Գարամանի թաղը բնակող Մինասի որդի Աճէմ Սարուխանի վազրֆնամէյին մասին է: Բնագրին

5. Հ. ՆԵՐՍԵՍ Վ. ԱԿԻՆԵԱՆ, Բաղէշի Դպրոցը, Վիեննա 1952, էջ 361:

մէջ Երուսաղէմի միւթեվէլիի ըլլալով յիշուած է Յովհաննէսի որդի Սարգիս գալֆա, եւ Նազար ըլլալով ալ՝ Հայոց Պատրիարք Մխիթարի որդի Յովհաննէս: Կը կրէ Հիմրէքի 1137 թուականը, որ կը համապատասխանէ փրկչական 1725 տարեթուին:

Հոս միջանկեալ կերպով նշենք՝ թէ վերոյիշեալ Սարգիս գալֆան, նշանաւոր արքունի ճարտարապետ Կեսարացի Սարգիս խալֆան է, որուն մահուան տարեթիւը մինչեւ վերջերս անյայտ կը մնար: Այս մասին ալ մեզի օգնութեան հասաւ Թրքահայոց Պատրիարքարանի թիւ 1643 Երուսաղէմի վագֆի տոմարը, որուն մէջ 1 Մարտ 1737 նշանակուած ըլլալով՝ օրը օրին գտանք իր մահուան թուականը:

Երկրորդ վաւերագիրը, որ կը կրէ 277 կարգաթիւը, Պոլսոյ Գըլթաշ թաղը բնակող Կատարինէի որդի Յովհաննէսի եւ քրոջը Հռիփսիմէի զաւակաց վագրֆմամէյին մասին է, որուն մէջ Հայոց Պատրիարք Մխիթարի որդի Յովհաննէս վարդապետ (րահիպ) Երուսաղէմի վագֆի միւթեվէլիի ըլլալով յիշուած է: Կը կրէ Հիմրէքի 1149 թուականը (փրկչական 1737):

334 կարգաթիւը կրող երրորդն ալ, Պոլսոյ Պալատ արուարձանին Հաճի Իսա թաղը բնակող Տէր Ստեփանի որդի Տէր Մարտիրոսի, Երուսաղէմի վագրֆ ըրած միւլֆ տանը մասին է: Միւթեվէլիի ըլլալով յիշուած է Հայոց Պատրիարք Մխիթարի որդի Յովհաննէս վարդապետ (րահիպ): Կը կրէ Հիմրէքի 1133 տարեթիւը, որուն փրկչական համապատասխանն է 1721:

Որպէսզի մեր գրածները աւելի վաւերական ըլլան եւ ընթերցողները օրուան թուրքերէնին մասին գաղափար մը ունենան, ասոնցմէ վերջնոյս բնագիրը ստորեւ կը ներկայացնենք:

334. Պալադ գաբուսի տախիլինտէ հաճի Իսա մահալլէսինտէ օլան՝ փափա Ըստեփանըն օղլու փափա Մարտիրոս միւլֆ էվինի կիւնտէ պիր ագնէ իմարէ իլէ գիւսսի խէրիֆէ վագֆ իտիւպ՝ միւթեվէլիիսի օլան էրմէնի փաթրիղի Մխիթարըն օղլու Յօհաննէս րահիպէ քէսլիմ իթսիֆտէ, շէօյլէ շարդ իյլէտի ֆիմ՝ միւթեվէլիի էլի իլէ իմար օլունուպ՝ հասըլ օլան զալլէսի մարեագուպ ֆէնիսասինտէ օլան ֆիւգարէի նասարաէէ Խօլլանա. վէ հէր ֆիմ միւթեվէլիի օլուր իսէ՝ ֆէնտի վագֆինտէ տախի հասպի միւթեվէլիի օլա. վէ գիֆր օլունան վագֆըն քէսլիլի քաղէրի ետինտէ օլա տիեիլ իթսիղինիւն՝ վագրֆմամէսի տիւր: Սէնէ 1133 (արաբական քուանշաններով): Իմգա՝ Իսթանպօլ գատըսընըն տիւր:

Գ. — ԾՆՆԴԻՆԵԱՆ ԹՈՒԱԿԱՆԸ

Կոլոտ Պատրիարքի ծննդեան թուականը ցարդ 1678 ընդունուած էր, հիմնուելով Նալեան Պատրիարքի այն վկայութեան վրայ՝ որուն

համեմատ 63 տարեկանին վախճանած է՝: Այս մասին հետեւեալը զրած է:

«Եւ լուսահոգի Հայր վարդապետն մեր եւս՝ ննջեաց ի Տէր ԿԳ աւի կենաց իւրոց»:

Սակայն իր նորայայտ վարդապետական բուն կնիքը, որ կը կրէ Տոմարական ՌՃԽ (փրկչական՝ 1691) տարեթիւը, կը հերքէ 1678 թուականը, որովհետեւ այդ պարագային 13 տարեկանին վարդապետական գաւազան ստացած պիտի ըլլար, ինչ որ անկարելի է: Հետեւաբար, Կոլոտ Պատրիարք ալ պէտք է որ Շղթայակիր նման 1670ի ատենները ծնած ըլլայ, որպէսզի վարդապետական գաւազան ստացած ատեն գոնէ մօտաւորապէս քսանամեայ տարիքը ունենայ:

Հոս միջանկեալ կերպով նշենք՝ որ զարմանալի զուգահեռութեամբ մը Նալեան Պատրիարքն է որ 63 տարեկանին վախճանած է:

Գ. — ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԹՈՒԱԿԱՆԸ

Նորայայտ վաւերագիրներուն մէջ ամենակարեւորն է, Կոլոտ Պատրիարքի վարդապետական հարազատ կնիքը կրող 19 Ապրիլ 1730 թուակիր փաստաթուղթը, որ Սկիւտարի մէջ ծախու առնուած եւ սեպհականութիւնը իր վրայ եղող՝ Երուսաղէմի վանքին դէմի երկու աշգիներուն մասին է: Արդ՝ սոյն գրութեան վերեւ կը գտնուի Կոլոտի վարդապետական բուն կնիքը, որ տոմարական ՌՃԽ թուականը կը կրէ, ինչպէս որ վերեւ յիշեցինք: Այսպէս յայտնի կը դառնայ՝ թէ Կոլոտ Շղթայակիրէ տարի մը առաջ վարդապետական գաւազան ստացած է:

Այս առթիւ նշենք՝ թէ Շղթայակիր Պատրիարքի 1692ին վարդապետական գաւազան ստացած ըլլալն ալ շուրջ եօթը տարի առաջ մեր կողմէ ստուգուեցաւ, շնորհիւ Պատրիարքարանի գիւնին խառն նամակներուն միջեւ երեւան եկած՝ իր 32 նամակներէն մի քանին վրայ գտնուող վարդապետական բոլորածեւ կնիքին, որ կը կրէր հետեւեալ արձանագրութիւնը.

«Է Յ(ԻՍՈՒՍ)Ի Ք(ՐԻՍՏՈՍ)Ի Ծ(Ա)Ռ(ԱՅ) ԳՐԻԳՈՐ Վ(ԱՐ)Դ(Ա)Պ(Ե)Տ ԱՄԸՐՏ(Օ)ԼՅԻ ՌՃԽԱ»:

Կիւլէսէրեան «Բիւզանդիոն»ի մէջ հրատարակած է Շղթայակիր եւ Կոլոտ պատրիարքներուն Բաղէշ զրկած 25 Յունիս 1720 թուակիր մէկ կոնդակը, որ կը կրէ առաջինին ՌՃԿԶ (1717) թուակիր Պատրիարքական, իսկ երկրորդին ալ ՌՃԾԷ (1708) թուակիր վարդապետական կնիքը: Վերջնոյս արձանագրութիւնն է.

6. Գանձարան ծանուցմանց, Պոլիս 1758, Ա, էջ 421: Կիւլէսէրեան, Կոլոտ, էջ 75: Ա.Կիւլէսէն, 62. աշխ. էջ 361:

«ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎՐԴ. ԲԱՂԻՆՅԵՐ»⁷:

Սոյն կնիքը գործածած է նաեւ՝ Յոննաց Երուսաղէմի Պատրիարք Մեկեթիոսի հետ, Պոլսոյ մէջ 1735 տարւոյ Մարտ ամսուն կնքուած ուխտագրին տակ⁸: Կիւլէսէրեան սոյն կնիքէն հետեւեցնելով՝ յիշեալ թուականին վարդապետական աստիճան ստանալը չի բացայայտեր: Ակինեան է որ այս կնիքին վրայ հիմնուելով, 1708ին Մշոյ Ս. Կարապետ վանքին մէջ Գրիգորէն (իմա՝ Շղթայակիրէն) վարդապետական գաւազան առնելը կ'արձանագրէ⁹:

Մինչդեռ Կոլոտ, Ղալաթիոյ Աղգ. Մատենադարանի թիւ 3 ձեռագիր Սկոթոսի Աստուածաբանութեան յիշատակարանին մէջ՝ ինքզինքը «քաղաքաւ Բաղիշեցի եւ ձեռնասուն աշակերտ Տեառն վարդապետ վրդ.ի» կը կոչէ¹⁰: Նկատի առնելով որ վարդան Բաղիշեցի 31 Մարտ 1704ին վախճանած է¹¹, հետեւաբար՝ Կոլոտ այդ թուականէն առաջ արդէն վարդապետական աստիճան ստացած էր:

Ուրեմն, Կոլոտ Պատրիարք կարծուածէն ուղիղ 17 տարի աւելի կանուխ վարդապետական գաւազան ստացած է: Արդէն իրեն պէս բացառիկ իմացականութեան տէր անձի մը համեմատաբար ուշ վարդապետական աստիճան ստացած ըլլալը կարելի չէր ընդունիլ: Ինչ որ զարմանալի է, սակայն, Կոլոտ Շղթայակիրէ տարի մը առաջ վարդապետ եղած ըլլալով հանդերձ, վերջինս, ըստ Կիւլէսէրեանի, Մշոյ Ս. Կարապետ վանքի առաջնորդ ընտրուելուն պատճառով, զայն հայր կոչած ըլլալն է¹²:

Փոխարէն՝ Շղթայակիր ալ զինքը որդի անուանած է: Այս պարզան հաստատուելու համար վենետիկի Միսիթարեանց Մայր դիւանէն ալ կարելի է օգտուիլ: Այսպէս, Շղթայակիր Պատրիարք, 1737 տարւոյ Ապրիլ ամսուն, Պոլիս գտնուած միջոցին, Մայր եկեղեցին տեղի ունեցած Ժողովի ընթացքին արտասանած պատգամին մէջ, ըստ Միսիթարեան միաբան Հ. Պողոս Վրդ.ի առ Միսիթար Աբբահայր ուղղեալ 30 Ապրիլ 1737 թուակիր նամակին, կ'ըսուի թէ իրենց վանահօր եւ ուսուցչին, այսինքն՝ վարդան Բաղիշեցւոյ ազգարարութեամբ է որ զիրար առջ մակդիրներով կոչած են: Բնադիրը հետեւեալն է¹³.

7. Կոլոտ, էջ 20-21:

8. ՏԻԳՐԱՆ Հ. Թ. ՍԱԽԱԼԱՆԵԱՆՑ, Պատմութիւն Երուսաղէմի, Հտ. Բ, Երուսաղէմ 1931, էջ 717:

9. ՆՈՅՆ, էջ 362:

10. ԿԻԼԷՍԵՐԵԱՆ, Յուցակ ձեռագրաց Ղալաթիոյ, սիւնակ 16:

11. ԱԿԻՆԵԱՆ, ԶԶ. աշխ. էջ 262, 263 եւ 362:

12. ԿԻԼԷՍԵՐԵԱՆ, Կոլոտ, էջ 6:

13. Հ. ՂԵՒՈՆԴ ՎՐԴ. ՏԱՅԵԱՆ, Մայր դիւան Միսիթարեանց վենետիկի Ս. Ղազար, վենետիկ 1930, էջ 67:

«... Գրիգոր Երուսաղէմայ պատրիարքն արար զՍիւննոդոս յեկեղեցւոյ Աստուածածնայ կոչեալ գամեմայն եկեղեցւոյն՝ զգլխաւորս Էսնաֆից՝ եւ գառաջիկայ քահանայս՝ առ յորս ասացեալ է, թէ ես եւ Յօհաննէս վարդապետն այսօր ժամանակ է, զի եղաք ձեզ առաջնորդ. ես յԵրուսաղէմ վարեցի 800 քսակ պարտս սուրբ Յակօբայ. եւ Յօհաննէս վարդապետն շինեաց գայմեմ եկեղեցիս յետ այրմանց նոցին, եւ եկեղեցեաց գրագումս պակասութիւնս լցայց, եւ գառաջնորդութիւնս արար. իսկ դուք, լուայ, զի ոչ իցէք կամեցեալ այժմ զՅօհաննէս վարդապետն ձեզ առաջնորդ լինել: Տեսէք որդեակք իմ, զի ես ոչ քողում գմա միայնակ, զի ուր է մա եւ ես անդ, եւ ուր մա եւ ես անդ (ուղիղը պիտի ըլլար՝ եւ ուր ես եւ մա անդ, ինչպէս որ նշած է Տալեան Վրդ. - Գ. Բ.), զի մա է իմ որդի, եւ ես նորա հայր ըստ աստարարութեան (այսպէս) վանահայրին մերոյ, որ էր ուսուցիչ մեր»:

Վերոգրեալ վաւերագրէն յայտնի կը դառնայ՝ թէ Շղթայակիր դեռ վարդան Բաղիշեցւոյ կենդանութեան, արդէն Կոլոտը իր հոգեւոր որդին կ'անուանէր: Հետեւաբար այս մակդիրը Շղթայակիր Մշոյ Ս. Կարապետ վանքի առաջնորդ ընտրուելուն հետ կապ մը չունի, ինչպէս կը կարծէ Կիւլէսէրեան:

Վարդան Բաղիշեցւոյ, Կոլոտը Շղթայակիր որդին նկատելէն կարելի է հետեւեցնել՝ թէ անկէ մէկ կամ երկու տարու աւելի փոքր եղած է. եւ հակառակ ասոր՝ իրմէ տարի մը առաջ վարդապետ անուանուած է: Թերեւս ալ, Կոլոտ իր հայրը կանուխ կորսնցուցած ըլլալուն պատճառով՝ Շղթայակիրը անոր հոգեւոր հայրը ընդունուած է իրենց հոգեւոր ծնողին կողմէ:

«Լուսաւորութիւն խոստովանութեան» անուն Ղալաթիոյ Աղգ. Մատենադարանի թիւ 49 ձեռագրին եւ Երուսաղէմի թիւ 103 ձեռագիր Ժողովածոյին¹⁴ 1725 թուակիր յիշատակարաններուն մէջ, Կոլոտ՝ վարդան Բաղիշեցիէն ետք կ'ոգեկոչէ նաեւ «գղաստիարակիչն իմ, զՏէր Գրիգոր սրբասնունդ վարդապետն, գայրն աստուածային եւ զնոյնացն Շղթայակիր հետ»¹⁵: Մենք այս անձը, վարդան Բաղիշեցւոյ կողմէ 1680ին վարդապետ անուանուած¹⁶ թիւ 5 աշակերտը՝ Գրիգոր Վրդ. Բաղիշեցին ըլլալը աւելի բանաւոր կը նկատենք: Որովհետեւ Կոլոտ Շղթայակիր տարի մը առաջ վարդապետական գաւազան ըստացած ըլլալով, անոր աշակերտիլը հաւանական չէ:

14. ՆՈՐԱՅՐ ԱՐՔ. ՊՈՂԱՐԵԱՆ, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակօբեանց, Հտ. Ա, Երուսաղէմ 1968, էջ 315:

15. Կոլոտ, էջ 6 եւ 181:

16. ԱԿԻՆԵԱՆ, ԶԶ. աշխ. էջ 314:

Կոլոտի 1708-ին առաջ վարդապետ անուանումի մասին անհերքելի վրաստ մըն է նաեւ 1704/1705 թթ. գրի առնուած Երուսաղէմի թիւ 452 ձեռագիրը, որ կը կրէ «Գիրք առաքինութեանց եւ մոլութեանց Պետրոս Արագնացոյ» անունը¹⁷: Արդ, սոյն ձեռագրին յիշատակաւորանին մէջ կ'ըսուի՝ թէ Յովհաննէս Վրդ. Բաղիշեցի, Ամրտօլու վանքին մէջ, յիշեալ թուականներուն, զայն ընդօրինակել տուած է՝ Յակոբ քահանայ Բաղիշեցոյ:

Այժմ կը ներկայացնենք Կոլոտի իսկական վարդապետական կընդր կրող վաւերագրի պատճէնը, որուն գրուած մասին մեծութիւնն է 14,5×15,5 սմ.: Գիրը ընտիր նոտր է. հետեւաբար հաւանական է որ Կոլոտի ձեռագիրը ըլլայ: Թուղթը հաստ եւ ողորկ է, սակայն որակով ընտիր է, ուստի տեղական կը թուի ըլլալ: Թանաքը սեւ է:

Բնագիրը հետեւեալն է.

ԿՆԻՔ

Ի Տէր Յօհաննէս Պատրիարքէ Կոստանդնուպօլսոյ ծաներուք համայն ազգ մեր ի տէր, զի այսու գրութեամբս յայտ առնեմ ամենայն տեսողաց. որ յիւսկիւտարու Երուսաղէմայ վանուց դէմն երկու այգի առած եմ, մինն *պին երւզ քըռք սէնէի սէֆէր* ամսոյ ուրն¹⁸, տէր Յակոբի դստերաց Ագիգէն եւ Նիսաբեթէն քան տէօնիւմ. չորս հարիւր զուշ. եւ միւսն՝ *պին երւզ քըռք իւչ սէնէի քամաղան եէտի*¹⁹, Մէհէմմետ չէլէպիի որդի Ահմէտ չէլէպիէն հինգ տէօնիւմ հարիւր յիսուն զուշ. զի ես որովհետեւ սուրբ Երուսաղէմայ նազըր լինելովս՝ այս այգիքն սուրբ Երուսաղէմայ Փոխարէներուն ըստակովն առած եմ՝ նոցին մալն է, ես քնաւ ալախայ չունիմ, նոցա տուած եմ, վասն որոյ յետ մահուան իմոյ՝ վարիսքն իմ ամենեւին մի՛ ունիցին իրաւունս պահանջելոյ ինչ յայսցանէ, զի որպէս ասացի ի վերոյ սուրբ Երուսաղէմայ Փոխարէներուն ստակովն եմ առած, նոցա տուած եմ, ես քնաւ ալախայ չունիմ. եւ վասն հաստատութեան քանիս՝ զայս գիրս գրեալ եւ կնքեալ՝ ետու ազգիս իշխանաց, զի ի դէպ ժամանակի հանոյ լիցի ամենայն տեսողաց, բաւէ:

Գրեալ եղեւ ի սէնէին պին երւզ քըռք իւչ, չէվալի տասներմէկին²⁰:

17. ՊՈՂԱՐԵԱՆ, ԵՂ. աշխ. հտ. Բ, 1967, էջ 417-419:

18. Կը համապատասխանէ փրկչական 1727 Սեպտ. 25, Հինգշաբթի օրուան:

19. Կը համապատասխանէ 1730 Մարտ 16, Ուրբաթ օրուան:

20. Կը համապատասխանէ 1730 Ապրիլ 19, Հինգշաբթի օրուան:

Որպէսզի ամէնուն կողմէ աւելի հասկնալի դառնայ, Կոլոտ Պատրիարք, բնագրին մէջ կարգ մը հայերէն բառերու տեղ թուրքերէնները դործածել նախընտրած է:

Վերագրեալ թանկարժէք վաստակովին մէջ յիշուող Տէր Յակոբ քահանայն Ս. Կարապետ եկեղեցոյ մէջ պաշտօնավարած՝ եւ ժամանակին հանրածանօթ դէմքերէն մին պէտք է որ ըլլայ: Արդարեւ Գր. Շղթայակիր, Յովհ. Կոլոտի յղած 9 Սեպտ. 1724 թուակիր նամակին մէջ յիշած է զինքը²¹:

1942-1945 թթ. երբ Սկիւտարի Հայոց Գերեզմանատան հին ու կարեւոր արձանագրութիւնները կը հաւաքէինք, Ս. Կարապետ թաղին մէջ հանդիպեցանք վերոյիշեալ Յակոբ քահանայի տապանաքարին, ուր կ'ըսուի թէ վախճանած է 1724ին: Ստորեւ բնագիրը նոյնութեամբ կը ներկայացնենք.

ԵՐԲ ՔՈ ՄԻԵԱԾԻՆՆ
ԳԱ Ի ԴԱՏԱՍՏԱՆ. ԱՆՏԻ
ԺՈՂՈՎԻՆ ԱՇԽԱՐՀ Ա-
ՄԵՆԱՅՆ. ԼԵՐ ԴՈՒ ԲԱՐԵ-
ԽՕՍ ՎԱՍՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ.
ՄԵՂԱ ՔԵԶ ՄԵՂԱՅ
ԿՈՅՍ ԱՆԱՊԱԿԱՆ:
ԹՎԻՆ ՌՃՀԳ-ԻՆ
ՆՈՒԱՍՏ ԵՒ ԱՆՊԻՏԱՆ
ԲԱԶՄԱՄԵՂ ԵՒ ԱՆԱՐԺԱՆ
ՅԱԿՈԲ ԿՈԶԵՑԵԱԼ
ՈԶ ԳՈՐԾՈՎ ԱՅԼ ԱՆ-
ՈՒԱՄԲ ՔԱՀԱՆԱՅԻ:

Հանդիպած ենք նաեւ իր երկու դուստրերուն տապանաքարերուն: Առաջինը՝ Շաթ խաթուն, մեռած է 1708ին: Տապանագիրը հետեւեալն է.

ԵՐԲ ՔՈ ՄԻԵԱԾԻՆՆ ԳԱ
Ի ԴԱՏԱՍՏԱՆ. ԱՆՏԻ ԺՈ-
ՂՈՎԻՆ ԱՇԽԱՐՀ ԱՄԵՆԱՅՆ.
ԼԵՐ ԴՈՒ ԲԱՐԵԽՕՍ ՎԱՍՆ
ՓՐԿՈՒԹԵԱՆ. ՄԵՂԱ ՔԵԶ ՄԵ-
ՂԱ ԿՈՅՍ ԱՆԱՊԱԿԱՆ:
ՏԵՐ ՅԱԿՈԲԻ ԴՈՒՍՏՐ ՇԱԺ
ԽԱԹՈՒՆԻՆ ԹՎԻՆ ՌՃԾԷ:

21. «Սիւն», 1971, էջ 368:

Իսկ երկրորդը, որ նույնպես եղիսարեթ անունը կը կրէ, մեռած է 1717ին: Իր արձանագրութիւնն ալ հետեւեալն է.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ
ՀԱՆԳՍՏԵԱՆ
ՏԵՐ ՅԱԿՈԲԻ
ԴՈՒՍ(Տ)Ր ԵՂԻՍԱ-
ԲԵԹ ԽԱԹՈՒՆ(ԻՆ)
ՈՐ ՓՈԽԵՑԱԻ
ԱՌ ՔՐԻՍՏՈՍ:
ԹՎԻՆ ՌՃԿԶ:

Հոս, միջանկեալ կերպով նշենք՝ թէ Պատրիարքարանին դիւանէն դտած ենք նաեւ 16 Սեպտ. 1738 թուակիր յունարէն գրութիւն մը, որուն ետեւի հայերէն բացատրութենէն՝ նոյն թուին Երուսաղէմի վանքին պարտէզին մնացեալ պատին յոյնէ մը ծախու առնուած ըլլալը յայտնի կը դառնայ:

Վաւերացութիւն ստորեւ իբր վկայ՝ հայատառ ստորագրած են Տէր Երեմիայ, Տէր Յովհաննէս, Տէր Յարութիւն, Մահտեսի Փանոս, Մահտեսի Զաքար եւ Ուղուրլու զալֆա:

Յիշեալ անձանոթ քահանաները Սկիւտարի Ս. Կարապետ եկեղեցին պաշտօնավարած պիտի ըլլան: Նոյնպէս այլ աղբիւրներէ անձանոթ է ճարտարապետ Ուղուրլու զալֆան:

Ե. ԿՆԻՔԸ

Կոլոտի բուն վարդապետական ձուածեւ կնիքին մեծութիւնն է 1,3×1,6 սմ.: Հորիզոնական կերպով բաժնուած է երեք մասի: Վերի մասին կեդրոնը կ'երեւայ մարդկային դիւիս մը եւ երկու կողմն ալ՝ երեքական զարդ: Կեդրոնի մասին մէջ փակագիր կերպով արձանագրուած է «ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ»:

Իսկ վարի մասին մէջ ալ քիչ մը դէպի ձախ սահած կը կարդացուի ՌՃԽ Տոմարական թուականը:

Անհրաժեշտ նկատեցինք՝ կնիքին լուսանկարը մեր գրութեան մէջ զետեղել (տե՛ս աստ էջ 292):

Զ. ԽԱՉԲԱՐԸ

Յովհաննէս Կոլոտ Վրդ. 1708ին Մշոյ Ս. Կարապետ վանքը դրտնուած միջոցին, իր եւ ծնողացը հոգւոյն փրկութեան համար խաչքար մը կանգնել տուած է, ինչ որ ցարդ անձանոթ կը մնար: Սոյն խաչքարը մինչեւ շուրջ տասը տարի առաջ գտնուած է յիշեալ վանքին Ս. Գէորգ մատրան մէջ: Զայն տեսած եւ լուսանկարած բարեկամի մը շնորհիւ կարողացանք ձեռք ձգել անոր նկարը, զոր ընթեր-



ԽԱՉԲԱՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿՈԼՈՏ ՎՐԴ.Ի

(Մշոյ Ս. Կարապետի վանք, 1708)



ՅՈՒԼՆԵՆԵՍ ԿՈՆՏՏԱՆԴՆՈՒԹԵԱՆ ԿՆԻՔՆԵՐԸ

Առաջին կմիք
ՌՃԽ...Երկրորդ կմիք
ՌՃԽԹ (= 1700)

ցողին ալ ներկայացնելու հաճոյքը ունինք: Ծաւալն է շուրջ 40×70 հրդմ. եւ բաւական աչքառու դեղարուեստական գործ մըն է:

Շատ հաւանական է որ խաչքարը զետեղուած ըլլայ 16 Մայիս 1708ին պատահած²² մեծ երկրաշարժէն ետք կատարուած վանքին վերաշինութեան առթիւ: Անկասկած ինք ալ կարեւոր դեր խաղացած է այս գործին մէջ, եւ ի վարձ, կարելի է ենթադրել՝ թէ փոխ վանահայր ընտրուելով, իր երկրորդ կնիքն ալ այս առթիւ պատրաստել տուած ըլլայ:

Համառօտագրութիւնները վերցուած՝ արձանագրութիւնը հետեւեալն է:

(ՍՈՒՐԲ) ԽԱՉՍ ԿԱՆԳՆԵՑԱԻ ՎԱՍՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀՈԳ-
ԻՈՅ ԻՒՐՈՅ ԲԱՂԻՇԵՑԻ ՅՈՒԼՆԵՆԵՍ
ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԵՒ ԾՆՈՂԱՅ ԹՎԻՆ ՌՃԽ:

Է. ՄԱՀՈՒԱՆ ԹՈՒԱԿԱՆԸ

Կոլոտի գրեթէ բոլոր կենսագիրները իրարմէ առնելով, մահուան թուականը 13 Փետր. 1741 նշած են, սկսելով Աստուածատուր Եպսկ. Տ. Յովհաննէսեանցէն²³, մինչեւ Մարթայեան²⁴: Միայն Սաւալանեանց²⁵ եւ Ալիսեան²⁶ 12 Փետրուար արձանագրած են:

22. ԱԿԻՆԵԱՆ, 62. աշխ. էջ 328:

23. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԵՊՍԿ. Տ. ՅՈՒԼՆԵՆԵՍԵԱՆՑ, Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի, հտ. Բ, Երուսաղէմ 1890, էջ 65:

24. Արեւմտահայ վերնձիւղումը - 1715, «Մարմարա» (Պոլիս), 2 Նոյ. 1976:

25. Նշ. աշխ. հտ. Բ, էջ 737:

26. Նշ. աշխ. էջ 371:

1969ին երբ կը պատրաստէինք Պալատու Ս. Հրեշտակապետ եկեղեցոյ ձեռագիրներու ընդարձակ ցուցակը, «Մեկնութիւն ծննդոց» անունը կրող եւ 1789ին ընդօրինակուած թիւ 55 ձեռագրին վերջաւորութեան (էջ 516), հանդիպեցանք Կոլոտի մահուան յիշատակագրութեան, որուն մէջ 12 Փետրուարին վախճանած ըլլալը յիշուած էր: Այս վերջին թուականը ուղիղ պէտք է ընդունել: Որովհետեւ, նախ՝ սոյն յիշատակագրութեան սկզբնաղբիւրը իր ժամանակէն է. երկրորդ՝ 14 Փետրուարին թաղուած ըլլալով, յուղարկաւորութեան պատրաստութեանց համար գոնէ օր մը անհրաժեշտ էր:

Զարմանալի զուգադիպութեամբ մը՝ Շղթայակիր Պատրիարք ալ 12 Փետրուարին վախճանած էր²⁷: Այսպէս Կոլոտ եւ Շղթայակիր, որոնք ի կեանս հոգւով ու սրտով անբաժան էին, մահուան թուականով ալ իրար միացան, եթէ ոչ տարեթիւով, բայց գոնէ ամսով եւ ամսաթուով:

Այժմ ներկայացնենք յիշատագրութիւնը.

«Յամի Տեառն ՌէճԽԱ, Փետրվարի ԺԲ. քարգմանել տուող գրք-
բոյս, Տէրն իմ եւ Հայր, Յօհաննէս վարդապետն Բաղիշեցի եւ Ին
հնգեակ ամօք պատրիարքն Կոստանդնուպոլսոյ, միակ ժամաւ, նախ-
քան գնդեւարիին ասաց գնդեւո(ր) սովորական շնորհակալութեան
բանս գայս. օրհնեալ է Տէր ի պարգեւս իւր. գայս առնելով կնիք.
եւ եզր բանից իւրոց. ի մէջ երկուց ժամուց Աւանդեաց գնդին իւր
առ Աստուած»:

Վաւերագրիս թարգմանիչը բազմալատտակ խորբերդցի Ղուկաս Վրդ. Աբրահամեանը պէտք է ըլլայ, թէեւ Յովհաննէս Հաննա Վրդ. անոր թարգմանութեանց մէջ այս գործը չէ յիշած²⁸: Իսկ հեղինակը անձանօթ կը մնայ:

Ը. ՅՈՒԼԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Յովհաննէս Կոլոտ Պատրիարքի յուղարկաւորութեան ցարդ մի-
միայն թուականը ծանօթ էր: Օրմանեան, յուղարկաւորութեան 14 Փետր. Տեառնընդառաջին կատարուած ըլլալը նշելով հանդերձ, օրը փոխանակ Ուրբաթի՝ Շաբաթ արձանագրած է²⁹:

1968ին, երբ Օրթագիւղի Ս. Աստուածածին եկեղեցոյ ձեռագիր-
ներու ընդարձակ ցուցակը կը կազմէինք, 1774ին Պոլսոյ մէջ գրի առ-
նուած եւ «Պատմութիւն զպատրի Մօնփօղդ աստուածաբանին ձիգ-

27. ՄԿՐՏԻՉ ԱՐԲ. ԱՂԱԽՆՈՒՆԻ, Միարանք եւ այցելուք Հայ երուսաղէմի, Երուսաղէմ 1929, էջ 85:

28. Պատմութիւն Երուսաղէմի, Պոլիս 1807, էջ 153-154:

29. Ազգապատում, մասն Բ, Պոլիս 1914, սիւնակ 2926:

վիթաց» անունը կրող թիւ 108 ձեռագրին սկիզբը (էջ 1-2) հանդիպեցանք իր յուղարկաւորութեան համառօտ մէկ նկարագրականին, զոր ստորեւ կը ներկայացնենք.

«Ըստ հասարակ թումանն գամս Փրկչին 1741, եւ ի ՌՃՂ. թուին հայոց եւ ի Փետրվարի ԺԴ. ի յաւուրն ուրբաթի որ էր տօն Տեառն՝ ընդ առաջի՝ զկնի քսան եւ եօթն ամ պատրիարքելոյն ի Կոստանդինուպօլիսն ի վերայ հայոց Բաղիշեցի Յոհաննէս քարոզիչ վարդապետին՝ մինչ ըստ պայմանին իւրոյ՝ եղին ի դիրս հանգստեան զմարմինն ի գաւիթն սրբոյն Գրիգորիոսի լուսաւորչի տաճարին՝ ապա բազմութիւնն Կոստանդինուպօլսոյ եւ շրջակայ գիւղորէից նորին՝ ուրանօր մեծաւ ջերմեանդութեամբ որ հաւաքեալ կայր ի քաղաւմն պատրիարքին իւրեանց՝ ցրուեցաւ եւ դարձաւ ամենայն ոք ի կայանս իւր»:

Այս վաւերագրին մէջ խիստ կարեւոր է Կոլոտ Պատրիարքի՝ իր բաղձանքովը, կամ աւելի ճիշտ՝ կտակովը, Ղալաթիոյ եկեղեցւոյ գաւիթը թաղուած ըլլալու պարագան, որ ցարդ անծանօթ կը մնար:

Միւս կողմէ՝ պատրիարքութեան, շրջանին 27 տարի ըլլալուն յիշատակութիւնը իրականութեան չի համապատասխաներ: Արդարեւ, Կոլոտ 9 Սեպտ. 1715ին³⁰ պատրիարքական գահը բարձրացած ըլլալով, մօտաւորապէս 25 ու կէս տարի պաշտօնավարած է:

Թ. — ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԸ

Կոլոտ Պատրիարքի մահուան առիթով հոգեհանգիստ կատարուած ըլլալու շուրջ՝ հին ու նոր աղբիւրներ կը լռեն: Միմիայն Մխիթարեան վարդապետ մը, Հ. Պօղոս Տայի Սիմօնեան, Պոլսէն Մխիթար Աբբա՛օր դրած 10 Մարտ 1741 թուակիր նամակին մէջ, այս մասին չահեկան եւ կարեւոր տեղեկութիւններ կը հաղորդէ: Ըստ Վերոյիչեալ վարդապետին, Կոլոտի մահուանէ ետք, իր յաջորդին եւ ձեռնասունին՝ Յակոբ Պատրիարք Նալեանի (1701-1764) հրամանով, Պոլսոյ բոլոր եկեղեցիներուն մէջ քառասուն օր բաց պատարագ տեղի ունեցած է: Այս հրահանգին անսաստեր է միմիայն Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ Պատմաճիօղլու մականունը կրող քահանան, որ Մեծ Պահոց մէջ բաց պատարագ մատուցուելը օրինադանցութիւն համարելով, զոց պատարագ կատարեր, եւ այս պատճառով ալ պատժուեց ինքն³¹:

Նամակին բնագիրը ստորեւ նոյնութեամբ կը ներկայացնենք, միմիայն յատուկ անուններուն սկզբնատառերը գլխաւորի վերածելով:

30. ԿԻԻԼԷՍԵՐԵԱՆ, Կոլոտ, էջ 15 եւ 135:

31. ՏԱՅԵԱՆ, Աշ. աշխ. էջ 95:

«... Պատրիարգ Կոստանդինուպօլսոյ Յոհաննէս վարդապետն ի Փետրվարի ամիսն անդրափոխեցաւ աստի կենաց ի ժամն լուսաւորչաց եւ անդ քաղեցաւ. եւ ի տեղի իւր եղ(աւ) պատրիարգ Նալօղլու Յակօր վարդապետն: Արդ՝ յորում աւուր վա(խ)նանցաւ պատրիարգըն, ի նոյնում աւուր հագաւ զկապայ ի դրանէ. եւ յօրէ յայնմանէ գըն, ի նոյնում աւուր հագաւ զկապայ ի դրանէ. եւ յօրէ յայնմանէ հրամայեցաւ ամենից եկեղեցեաց մինչեւ ի քառասուն օր բաց պատարագ առնել վասն հոգւոյ պատրիարքին: Բայց ի Սալումանաստր, Պասաֆը օղլու կոչեցեալ դժոխքերանն՝ ասելով օրինադանցութիւն բաց պատարագ կատարելն ի քառասունդրական պահոց, զոց պատարագ արարեալ է. եւ ի միւսում աւուր կոչեցեալ ի նոր պատրիարգէն առնութեան, զբազում նախատինս ընկալեալ է ի նմանէ. նաեւ արգիլեալ զնա յաւիտեան յեկեղ(եց)ին ո՛չ զծանուցումն առնել եւ ո՛չ զգարոց տալ. եւ եզրօր նորա տէր Մարտիրոսին շնորհեալ զմի փիլոն նախագահ արարեալ է զնա...»:

Ժ. — ՔԱՌԵԱԿ ՄԸ

16 Յունիս 1789ին, անունը ծածկագիր դարձնելու կողմէ ընդօրինակութիւնը աւարտած եւ նախապէս յիշուած՝ Պալատու թիւ 55 ձեռագիր «Մեկնութիւն Մննդոց» գրքին յառաջաբանին վերջաւորութեան (էջ 42), կայ Կոլոտ Պատրիարքի կողմէ գրի առնուած քառեակ մը: Վերեւը կը գտնուի, ձեռագիր, փակագիր եւ երկաթագիր տառերով ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ արձանագրութիւնը կրող կնիքը, որուն թուականը դժբախտաբար կը պակսի:

Կնիքին ձախ կողմի անկիւնը կայ Յ տառը, եւ աջ կողմն ալ՝ Ա տառը: Ժակ քառեակին տակն ալ՝ ձախ անկիւնը Բ, եւ աջ անկիւնն ալ Պ տառերը, որոնք չորսն ալ թռչնագիր են: Հաւանաբար անոնք սկզբնատառերն են՝ «ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՀԻԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՂԻՇԵՑԻ ՊԱՏՐԻԱՐԳ» բառերուն:

Քառեակին բնագիրը հետեւեալն է.

«Թարգմանել տուողի գրքոյս.
յետնագումնեղի հիֆոյս.
մաղթեցէ՛ք զերանեալ կոյս.
ձօնեցէ՛ք զերագանց լոյս:

Երջանկայիշատակ Յովհաննէս Կոլոտ Պատրիարքի ծննդեան կարծեցեալ 300ամեակի սեմին վրայ, եթէ կարողացանք իր փառապանծ յիշատակին դոյզն ու համեստ ծաղկեպսակ մը հիւսել՝ մեր տկար գրչովը, մեզ երջանիկ պիտի նկատենք:

Այս առիթով, ուրախ ենք յայտնելու՝ թէ վերջերս, Ամեն. Սըրբազան Պատրիարք Հօր նախագահութեամբ դումարուած «Շողակաթ»

տարեգրքի խմբագրութիւնը որոշած է, եթէ Տէրը կամենայ, յառաջիկայ տարի հանդիսաւոր կերպով տօնելու, Կոլոտի նորայայտ կնիքին լոյսին տակ յամեցած ծննդեան 300ամեակը, որուն լիուլի արժանի է իր պատկառելի վաստակովը եւ անմոռանալի մեծագործութիւններովը:

Խո՛ւնկ ու աղօթք իր պանծալի յիշատակին:

Սկիւտաք, 26 Մարտ 1977

Գ. ԲԱՄՊՈՒՔՅԱՆ

Անդամ

Խոտամպուլի Համալսարանի
ձարտաբաղնական Պատմութեան
հւ

Վերականգնման Հիմնարկին

Յ. Գ. Կոլոտ Պատրիարքի նուիրուած մեր ներկայ ընդարձակ յօդուածը աւարտելէ շուրջ մէկուկէս ամիս ետք, Պատրիարքարանի դիւանին մէջ պատահաբար հանդիպեցանք երջանկայիշատակ ՌՃԽԹ (1700) թուականը կրող երկրորդ կնիքին:

Առաջին կնիքին լոյսին տակ՝ ծննդեան թուականը տարակուսելի դարձած ըլլալուն պատճառով, կը փափաքէինք սրտազին որ ստեղծած թանձր մշուշը փարատի, եւ Կոլոտ Պատրիարքի ծննդեան ըստոյդ թուականը յայտնուի:

Ներկայ երկրորդ կնիքը երկու տեղ կը գտնուի Երուսաղէմի վաղ-Ֆի արաբատառ հին հէօճէթի մը վրայ, ուր բացի Կոլոտի կնիքէն՝ կ'երեւայ նաեւ Յակոբ Պատրիարք Նալեանի 1728 թուակիր եւ Արքունի ճարտարապետ Սարգիս խալֆայի անթուակիր կնիքները: Առաջին արձանագրութիւնը կը կրէ Հիճրէթի 1146 (1734), իսկ երկրորդն ալ 1147 (1735) թուականը: Առաջինին մէջ ստորագրած է «Պատրիք Օհաննէս էլ միւթէվէլի», իսկ երկրորդին մէջ ալ «Պատրիք Օհաննէս քահիպ էլ միւթէվէլի»: Կնիքին չափը նախորդին հետ նոյնն է (13×16 միլիմետր): Պարունակութիւնն ալ գրեթէ նոյնն է, միմիայն սա տարբերութեամբ՝ որ Ֆինչ առաջինին մէջ վերի մասին մէջ գտնուող դէմքին ծընօտը սուր է, այս երկրորդին մէջ կլոր է: Կարենալ բաղդատելու համար երկրորդին ալ լուսանկարը կը ներկայացնենք:

Սոյն երկրորդ կնիքին որոշապէս ՌՃԽԹ թուականը կրելէն կարելի է հետեւցնել՝ թէ առաջինն ալ նախապէս նոյն թուականը ունեցած է. սակայն թ տառը անծանօթ պատճառով մը, ժամանակի ընթացքին անընթեռնելի դառնալու չափ մաշած է: Ուրեմն, առաջին կնիքին մեզի ծանօթ վերջին գործածութենէն նուազադոյն երեք կամ չորս տարի ետք, Կոլոտ նոր կնիք մը պատրաստել տուած է: Արդէն

ինչպէս որ նշած էինք առաջին կնիքին մասին խօսած ատեն, թուականին տառերը դէպի ձախ կողմը սահած էին, եւ աջ կողմը պարապ տառի մը տեղը որոշապէս յայտնի էր. սակայն տեսնուող գիծերը տառէ աւելի՝ զարդի երեւոյթ ունէին:

Այսպէս, Կոլոտ Պատրիարքի 1678ին ծնած, եւ 1700ին ալ վարդապետական դաւադան ստացած ըլլալը վերջնականապէս կը ճշտուի:

Հետեւաբար, մաղթելի է որ յառաջիկայ տարի, ծննդեան 300ամեակը ամէնուրեք, եւ առաջին հերթին՝ Ստանպուլի մէջ, իր փառապանծ յիշատակին արժանի շուքով տօնուի:

22 Մայիս 1977

Գ. Բ.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. ՅԱԿՈԲ ՊԱՏՐԻԱՐԳ ՆԱԼԵԱՆ, Գանձարան ծանուցմանց, Պոլիս 1758, Ա. մաս, էջ 421:
2. Հ. ՄԻՔԱՅԷԼ ՎՐԴ. ԶԱՄԶԵԱՆ, Պատմութիւն Հայոց, հտ. Գ, Վենետիկ 1786, էջ 770-776, 783, 819, 822-824:
3. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԵՊՍԿ. Տ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆՑ, Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի, հտ. Բ, Երուսաղէմ 1890, էջ 65-66:
4. ՀՐԱՆԴ ԱՍՏՈՒՐ, Կ. Պալսոյ Հայերը եւ իրենց պատրիարքները, «Ընդարձակ օրացոյց Ազգ. Հիւանդանոցի», Պոլիս 1901, էջ 128-137:
5. ԲԱՐԳԵՆ Ծ. ՎՐԴ. ԿԻԼԷՍԷՐԵԱՆ, Կոլոտ Յովհաննէս Պատրիարք, Վիեննա 1904, 232 էջ:
6. ԲԱՐԳԵՆ Ծ. ՎՐԴ. ԿԻԼԷՍԷՐԵԱՆ, Եկեղեցապրութիւն եւ Կոլոտ, «Բարոյներ» Ա. հտ., Կ. Պոլիս 1904, էջ 319-332:
7. Հ. ԳՐԻԳՈՐԻՍ Ծ. ՎՐԴ. ԳԱԼԷՄԲԱՐԵԱՆ, Կենսագրութիւն Սարգիս Արք. Սարափեան, Վիեննա, 1908, 433 էջ:
8. ՎԱՀԱՆ Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ, Յիշատակարան, հտ. Ա, Պոլիս 1910, էջ 40-43:
9. ՄԱՂԱԳԻՍ ԱՐԳ. ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատմութիւն, մասն Բ, Պոլիս 1914, Բ. 1911, 1915, 1923, 1934, 1935, 1999, 2000:
10. ՄԿՐՏԻԶ ԱՐԳ. ԱՂԱԽՆՈՒՆԻ, Միաբանք եւ այցելութիւն Հայ Երուսաղէմի, Երուսաղէմ 1929, էջ 369-372:
11. Հ. ՂԵՒՈՆԴ ՎՐԴ. ՏԱՅԵԱՆ, Մայր դիւան Միքայելեան վեմետիւյի Ս. Ղազար, Վենետիկ 1930, էջ 67, 95, 168, 170 եւ 319:
12. ՏԻԳՐԱՆ Հ. Թ. ՍԱԽԱԼԱՆԵԱՆ, Պատմութիւն Երուսաղէմի, հտ. Ա, Երուսաղէմ 1931, էջ 668-672, հտ. Բ, էջ 735-737:
13. Հ. ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ԱԿԻՆԵԱՆ, Բաղդէի դպրոցը, Վիեննա 1952, էջ 360-372:
14. Գ. Պ. (ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐԳ), Հ. Յովհաննէս Բաղդէեցի Կոլոտ Պատրիարքը, «Շողակաք», 1954, Թիւ 1-2, էջ 12-18:
15. Գ. ԲԱՄՊՈՒՔՅԱՆ, Կոլոտ Յովհաննէս Պատրիարք ծննդեան Բաղդէեցի՝ Էրթէ Զմառացի, «Հայաստանի Կոյմակ», 1955, Թիւ 47, էջ 1117-1118:
16. Յ. ՄԱՐԹԱՅԵԱՆ, Արեւմտահայ վերընթիւզումը - 1715, «Մարմարա», 2 Նոյ. 1976: